ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 589-Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշումները՝

1. Ֆրանկոֆոնիայի խաղերի դրոշի փոխանցման և Ֆրանկոֆոնիայի խաղերը 2027 թվականին Հայաստանի Հանրապետությունում անցկացնելու կապակցությամբ Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ հուշագրի ստորագրման արարողությանը մասնակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանին և Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի օգնական Հովհաննես Պողոսյանին 2024 թվականի հունիսի 26-27-ը ներառյալ, իսկ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետի տեղակալ Քրիստինե Գրիգորյանին 2024 թվականի հունիսի 26-28-ը ներառյալ գործուղել Ֆրանսիայի Հանրապետություն (Փարիզ):

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմին՝ սահման-ված կարգով ապահովել գործուղման հետ կապված ծախսերի հատուցումը (գիշերավարձը՝ համաձայն փաստացի ծախսերը հիմնավորող փաստաթղթերի):

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել գործուղումից վերադառնալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն ներկայացնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

20.06.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ